

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑԻՆ ԵՒ ՅՈՒՆԱԳԱՒԱՆՆԵՐԻ ՄԿՐՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Պետրովիչը, Սալմաստեցու եռանդուն հռոմէական լինելուն որպէս ապացոյց, առաջ է բերում մի տեղեկութիւն, որի համաձայն նա, Սալմաստեցին, 1551 թուականին սեղանագրի յունագաւաններէ խլել էր երկու տղայ՝ որպէս թէ «կաթողիկէ դաւանանքի դարձնելու նպատակով»<sup>12</sup>: Այս տեղեկութեան համար Պետրովիչը որպէս աղբւր է ցոյց տալիս «Լուսովի դատական վճիռների ժողովածու»-ի Ժ հատորը<sup>13</sup> եւ նրա հեղինակութիւնն ամբողջապէս համար վկայակոչում է նաեւ մեր օրերի մի ուսումնասիրութիւն<sup>14</sup>, որի աղբւրքը, սակայն, հենց նոյն «Լուսովի դատական վճիռների ժողովածու»-ի նոյն Ժ հատորն է, ուրեմն՝ անարժէք:

Իր տարօրինակութեամբ անխուսափելիօրէն թերահաւատութիւն ներշնչող այս տեղեկութիւնը մեզ մղեց լծուելու՝ ցոյց արուող աղբւրքների ստուգման աշխատանքին, որից եւ պարզուեց, որ «Լուսովի դատական վճիռների ժողովածու»-ի Ժ հատորում վճիռների բնագրեր չեն հրատարակուել, այլ միայն վաւերագրերի ցուցակները լեհերէն լեզուով՝ նրանց բովանդակութիւնը յայանող համառօտ տեղեկութիւններով: Հատորի 60-րդ էջի վրայ գտնուում է ցուցակի № 906 նկարագրութիւնը, որը վերաբերում է երկու տղաների խնդիրը շօշափող վաւերագրին: Ահա այդ նկարագրութեան հայերէն թարգմանութիւնը:

«906. Կրակովում, 19 մայիսի 1551 թ., լեհաց թագաւոր Սիգիսմոնդ Աւգոստոսը՝ Լուսովի հայոց պատրիարք Ստեփանոսին, որպէսզի նա իրենց մօրը վերադարձնի յունագաւան այն երկու տղաներին, որ նա խլել էր կաթողիկէ դաւանանքին դարձնելու համար»:

Այս ծանօթագրութեան վերջում նշուում է, որ նկարագրուող անտիպ վաւերագիրը, որը լատիներէն է, գտնուում է Լուսովի Բեռնարդինեան կոչուած դիւանատան (Archivum Bernardinum) Լուսովեան ամբոյցի դիւանում (Archivum Castri Leopoliensis), հատոր 328, էջ 666-667:

Ուրեմն՝ այս վաւերագիրը Սիգիսմոնդ Բ Աւգոստոսի մի նամակն է, գրուած 1551 թուականի մայիսի 19-ին, նամակ, որով նա Սալմաստեցուն յանձնարարում է յունագաւան համայնքին վերադարձնել յիշեալ տղաներին: Բայց Պետրովիչն, իրեն յատուկ նկատուումով, հայ ընթերցողին ցոյց չի տալիս բուն՝ արքայական վաւերագիրը<sup>15</sup> եւ միայն հետագայում է, որ լատին ընթերցողի համար ամբողջութեամբ հրատարակում է նրա լատիներէն բնագիրը<sup>16</sup>: Իսկ այդտեղից ի՞նչ է պարզուում մեզ համար:

Նամակն ասում է, որ յունագաւանների՝ Հալիչի, Լուսովի եւ Կամենիցի առաջնորդ Արսէն Բալաբանի եւ Լուսովի արեւելեան ծէսով հայերի պատրիարք Ստեփանոսի (Stepan patriarcha ritus orientalis Armenorum civitatis Leopoliensis) միջև վէճ էր առաջացել «յունական մկրտութիւնից հայկականի դարձուած ինչ-որ տղաների խնդրով» (occasione quorumdam puerorum in baptismum Armeniorum ex graeco translatorum), այսինքն՝ իբրև հայ վերամկրտուած տղաների խնդրով, խնդիր, որն ընկել էր թագաւորի իրաւարարութեանը, եւ վերջինս Ստեփանոսին գրում էր, թէ այդ տղաներն իրենց հարազատ մօրից խլուելով «մկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են դարձուել [եւ] օծուել են ձեր ծէսով» (in fidem ritus vestri armenici transtulissent baptismo [ac] juxta ritum vestrum unxissent).<sup>17</sup>

<sup>12</sup> Անդ, էջ 44 եւ 108: PChA p. 97 e 101:  
<sup>13</sup> "Akta Grodzkie i Ziemskie", t. X, Lwów, 1884, str. 60, № 906.  
<sup>14</sup> K. Chodynicki, «Kościół prawosławny a Rzeczpospolita Polska; Zarys historyczny 1370-1632», Warszawa, 1934, str. 93.  
<sup>15</sup> Հմմտ. ՊՍՍ էջ 44:  
<sup>16</sup> PChA p. 97-98.  
<sup>17</sup> Բնագրի այս մասն ամբողջութեամբ բերենք, որպէս զի աւելի պարզ լինի ընթերցողի համար. "Exponi fecit nobis venerabilis Arsenius Balaban Haliciensis, Leopoliensis, Camenecensisque vla-